

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎ ԶԱԳՈՐՍԿԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ-ՍԵՐԳԻԵՎՍԿԻ ՎԱՆՔՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ, ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Սույն թվականի հունիսի 1-ին, հրավերովը Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիո Պիմեն Պատրիարքի, Մերձմոսկովյան Զագորսկ քաղաքի Սուրբ Երրորդություն-Սերգիևսկի վանքում տեղի ունեցավ Սովետական Միության մեջ գործող Եկեղեցիների և կրոնական համայնքների ղեկավարների ժողով՝ նվիրված զինաթափման և ժողովուրդների միջև խաղաղության հարցերին:

Ժողովին ներկա էին քսաներեք քրիստոնեական, մահմեդական, հրեական և բուդդայական կրոնական կազմակերպությունների շուրջ վաթսուն բարձրաստիճան ներկայացուցիչներ: Մասնակցում էր նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հովվապետը՝ Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էին Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը և Մայր Աթոռի դիվանատան քարտուղար Տ. Անանիա վարդապետ Արաքաջյանը:

Հունիսի 1-ին, առավոտյան ժամը 10-ին, Զագորսկի մայրավանք և ապա տեղի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճ են ժամանում ժողովի ներկայացուցիչները, որտեղ տեղի է ունենում ժողովի բացումը: Բացման խոսքը արտասանում է Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ, Մինսկի և Բելոռուսիայի արքեպիսկոպոս Տ. Ֆիլարետ միտրոպոլիտը, որը հանուն Ռուս Եկեղեցու ողջունում է բարձրաստիճան հոգևոր դեմքերին:

Ապա խոսք է առնում Նորին Սրբություն Պիմեն Սրբազան Պատրիարքը և ընդգծում անհրաժեշտությունը ամեն գնով պահպանելու աշխարհի խաղաղությունը և ժողովուրդների համերաշխ գործակցությունը:

Իր խոսքի վերջում Նորին Սրբությունը կոչ է անում բոլոր ներկաներին՝ միացնելու իրենց ուժերը, ի գործ դնելու կրոնական ղեկավարների ողջ հեղինակությունը՝ հակազդելու համար աշխարհում պատերազմի օջտին և միջազգային լարվածությունը խրախուսող բոլոր ուժերին՝ հանուն Աստուծո կամքի ու խաղաղության ուխտի:

Նորին Սրբություն Պիմեն Հայրապետի ճառից հետո ելույթ են ունենում համագումարի մասնակիցները՝ քրիստոնեական, մահմեդական, հրեական և բուդդայական կրոնների ներկայացուցիչները, որոնք նույնպես իրենց սրբազան պարտքն են համարում հանդես գալու խաղաղության պաշտպանության դիրքերում:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու ողջույնի և հոգևոր խաղաղության հետևյալ խոսքն է ասում Ամենայն Հայոց Հայրապետը.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Աստուծո ողորմությամբ գտնվում ենք այս սուրբ վայրում, Երրորդություն-Սերգիևսկի վանքում, հրավերովը ռուսաց Պատրիարք, Նորին Սրբություն Պիմենի:

Ռուսաց Պատրիարքը մեզ հրավիրել է այստեղ խորհրդակցելու և մի կոչ պատրաստելու հօգուտ աշխարհի խաղաղության և նրա պահպանման:

Մենք ջերմապես ողջունում ենք այս առաջարկը և շնորհակալություն ենք հայտնում Նորին Սրբությանը սույն աստվածահաճո նախաձեռնության համար:

Այս նախաձեռնությունը Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի լավագույն նվերն է՝ ընծայված մեզ բոլորիս իր գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ:

Հիշում ենք, շուրջ 33 տարիներ առաջ նման առաջին նախաձեռնությունը կատարեց հանգուցյալ երջանկահիշատակ Ալեքսի Պատրիարքը ռուսաց, հայոց և վրաց կաթողիկոսների հետ միասին, ու դրանով դրեց հիմք մեր Եկեղեցիների խաղաղության շարժման: Այդ օրվանից Սովետական Միության մեջ գործող Եկեղեցիների շարժումը զարգացավ ու ծավալվեց աքանչելի արդյունքներով: Կարելի է մի ընդարձակ պատմություն գրել այս մասին, որը անբաժանելի մասն է կազմում մեր Եկեղեցիների ետպատերազմյան շրջանի տարեգրության:

Մենք՝ հոգևորականներս, սուրբ եռանդով ենք մասնակցում խաղաղության շարժմանը՝ մղված մեր կրոնական դավանանքից, մեր քրիստոնեական խղճից, որովհետև մեր Աստվածը խաղաղության Աստված է և մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իշխանն է Խաղաղության: Կարելի չէ քրիստոնյա լինել և չգործել ու չպայքարել խաղաղության համար:

Մենք՝ սովետական մեր հայրենիքում գործող հոգևորականներս, մղված ենք մասնակցելու խաղաղության շարժումին ելնելով նաև մեր հայրենասիրական զգացմունքներից: Մենք չենք կամենա, որ մեր ժողովուրդները նոր պատերազմներ տեսնեն: Մենք կամենում ենք, որ Սովետական Միության եղբայրացած ազգությունները ապրեն խաղաղ, շինարար ու առաջադեմ իրենց կյանքը՝ Սովետական մեծ Միության ընտանիքում:

Եվ վերջապես, խաղաղության պայքարը մենք նկատում ենք առաջադեմ երևույթ, մարդասիրական երևույթ: Պատերազմի դիմում են հետադիմականները, հոռետեսներն ու իրենց դարը ապրած գաղափարախոսությունները: Մեր համոզումն է, որ Քրիստոսի Եկեղեցին իր ճակատագիրը պետք է կապի առաջադիմության և խաղաղության պաշտպանների հետ:

Այսօր համայն աշխարհը կանգնած է նոր կացության առջև: Վերստին բորբոքվում է պատերազմի հիստերիկան, հատկապես Միացյալ Նահանգներում ծանր մտահոգություն պատճառելով աշխարհի բոլոր ժողովուրդներին: Մենք մի քանի օր է, ինչ վերադարձել ենք արտասահմանից: Եղանք Ավստրիայում, Արևմտյան Գերմանիայում և Ֆրանսիայում, ուր Մեր օրհնությունը տարանք մեր Եկեղեցու այն զավակներին, որոնք մեծ թվով եկեղեցական համայնքներ կազմած ապրում են այդ երկրներում: Այդ երկրներում Մենք հանդիպումներ ունեցանք քույր Եկեղեցիների պետերի հետ էկումենիկ ոգով: Տեղի ունեցան համատեղ աղոթքներ և հանդիսավոր հավաքույթներ: Այդ բոլոր առիթներով Մենք խոսեցինք նաև, թե բոլոր Եկեղեցիների պարտականությունն է պաշտպան կանգնել խաղաղության դատին:

Եվ պետք է հաստատենք Ձեր առաջ, որ նաև մեր քույր Եկեղեցիների ղեկավարները՝ կաթոլիկ թե լութերական, բաժանում էին Մեր մտահոգությունը՝ արտահայտվելով հօգուտ խաղաղության պաշտպանության:

Վերոհիշյալ երկրներում Մենք ունեցանք նաև հանդիպումներ պետական պատասխանատու անձնավորությունների հետ, ինչպես Ավստրիո հանրապետության պրեզիդենտի, Բավարիո վարչապետի տեղակալի, Ֆրանկֆուրտի արդարադատության նախարարի և այլ պաշտոնական անձանց հետ, որոնք նույնպես բաժանում էին Մեր մտահոգությունները և արտահայտվում էին պատերազմի հրահրումների դեմ: Նույն մթնոլորտն էր տիրում նաև Ֆրանսիայում: Մի բան հաստատապես կարելի է ասել, որ Արևմուտքի ժողովուրդների լայն զանգվածները դեմ են պատերազմի հիստերիկային ու ցանկանում են խաղաղության պահպանումը Եվրոպայում, ցանկանում են, որ պետությունները համերաշխորեն գործակցեն և հաջողեցնեն զինաթափումը, դեմ են, մանավանդ, ամերիկյան զենքերի և հրթիռների Եվրոպայում տեղադրմանը:

Անհավասիկ, այս պայմանների մեջ է, որ մենք հավաքվել ենք այսօր, այստեղ, միասնաբար վճռելու, ասելու համար մեր խոսքը, ուղղելու համար մեր կոչը բոլոր քույր Եկեղեցիներին և կրոնական կազմակերպություններին՝ ընդդեմ պատերազմի, հօգուտ խաղաղության և շինարար բանակ-

ցությունների՝ հանուն նրա, որ մարդկությունը ազատվի պատերազմների մղձավանջից, ու բացվի ճանապարհը պետությունների միջև խաղաղ գործակցության, ճանապարհը զենքերի կրճատման և նույնիսկ՝ զինաթափման:

Մենք կրկին Մեր գոհունակությունն ենք հայտնում Պիմեն Պատրիարքի սույն հրավերի առթիվ ու նաև՝ մեր ուրախությունը, որ մենք մեր կոչով մեկ անգամ ևս մեր պարտքը պիտի կատարենք Աստուծո հանդեպ, մեր ժողովուրդների հանդեպ, մեր սովետական հայրենիքի հանդեպ:

Թող Աստված օրհնի խաղաղության սրբազան գործը:

Թող Աստված օրհնի բոլոր նրանց, ովքեր պայքարում են, որ աշխարհի վրա տիրի խաղաղությունը:

Օրվա երկրորդ կեսին հաղորդումարում տեղի է ունենում մտքերի փոխանակություն: Ապա, մի փոքր ընդմիջումից հետո, ի գիտություն ներկաների, Տ. Ֆիլարետ միտրոպոլիտը ընթերցում է հետևյալ պատմական թուղթը, որպես կոչ հանուն հաղորդումարի, ուղղյալ աշխարհի բոլոր կրոնների և բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց, ընդդեմ պատերազմի և ի պաշտպանություն աշխարհում կայուն և հարատև խաղաղության:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՉԸ՝
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԿՐՈՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ
ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻՆ՝ ՀԱՆՈՒՆ
ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ

Մենք՝ Սովետական Միությունում գործող Եկեղեցիների և կրոնական համայնքների ղեկավարներս, որ Նորին Սրբություն, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի հրավերով, այսօր, 1981 թվականի հունիսի 1-ին, հավաքվել ենք այստեղ, Մերձմոսկովյան Երրորդություն-Սերգիևսկի վանքում քննարկելու զինաթափման և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման հարցերը, ողջունում ենք Ձեզ հնագույն, բայց միշտ կենդանի ողջույնով.

Խաղաղություն ընդ Ձեզ:

Ներկա մեր հաղորդումարը շարունակությունն է շատ տարիներից ի վեր գոյություն ունեցող, բարի ավանդույթներով լի նման հավաքույթների:

Այսօր մենք հավաքվել ենք այստեղ, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հնագույն հոգևոր կենտրոնում մեկ անգամ ևս արտահայտելու մեր խորին մտահոգությունը ներկա միջազգային հարաբերությունների վիճակի առթիվ, մի վիճակ, որ լի է միջազգային պատերազմի սպառնալիքով:

Այդ սպառնալիքը առաջ բերող պատճառը մենք տեսնում ենք ՆԱՏՕ-ի կազմի մեջ մտնող մի շարք երկրների և առաջին հերթին՝ ԱՄՆ-ի Հելսինկյան՝ Եվրոպայում անվտանգության և համատեղ գործակցելու համաձայնագրի պարտավորություններից հրաժարվելու մեջ, պարտավորություն, որ կոչում էր. «Ներդնել իր ավանդը միջազգային խաղաղության և անվտանգության ամրապնդման, ինչպես նաև՝ ընկերային և տնտեսական առաջադիմության, ժողովուրդների բարօրության հիմնական իրավունքները պահպանելու գործում»:

Մենք հանցավոր ենք համարում նրանց գործողությունները, ովքեր սպառազինությունների մրցավազքը և՝ ընտրախավային, ֆաշիստական ու ռասիստական վարչակարգերի դեմ պայքարող, իրենց կյանքը բարու սկզբունքների վրա կառուցելու և մարդուն վայել ապրելակերպի ձգտող տերությունների դեմ իմպերիալիստական շրջանների՝ այդ պետությունների ժողովուրդների ներքին կյանքին խառնվելու փորձերը արդարացնելու նպատակով լուրեր են տարածում «խաղաղությանը ըսպառնացող սովետական զինվորական վտանգի» մասին:

Այդպիսի կեղծ մեղադրանքը ինքնին հերքվում է մեր պետության ներքին և արտաքին խաղաղասեր քաղաքականությամբ:

Ինքներս, մեր հերթին շեշտում ենք ամբողջ աշխարհի և Եվրոպայի խաղաղությանը սպառնացող հետևյալ երևույթները.

«Սահմանափակ» պատերազմի ուսմունքի տարածումը, որի, ինչպես նաև՝ «սպառազինվելու» պատրվակի տակ փորձեր են արվում ժողովուրդների կամքին հակառակ Արևմտյան Եվրոպայում տեղադրելու ամերիկյան նոր, միջին տարածության հրթիռա-միջուկային սիստեմներ, ինչը և կփոխի զինվորական և ռազմավարական հավասարակշռության հօգուտ ՆԱՏՕ-ի, որ և նոր վտանգների առիթ կտա ոչ միայն Արևելյան, այլ նաև՝ Արևմտյան Եվրոպայի տերությունների համար:

— Ձեզոքացումը կամ դադարեցումը զինաթափման վերաբերյալ միակողմանի կամ երկկողմանի այն բանակցությունների,

որոնց գործոն կերպով մասնակցում է դրական արդյունքների ձգտող մեր երկիրը:

— ԱՄՆ-ի ղեկավարության կողմից ՍՄՍ-2-ի պայմանագրի վավերացման սառեցումը:

Միջազգային այս վտանգավոր պայմաններում ազդու կերպով հնչեց աշխարհում խաղաղությունը հոգածությամբ լի սովետական պետության ղեկավարի ձայնը, որը նոր առաջարկություններով դիմեց բոլոր պետություններին և աշխարհի բոլոր ժողովուրդներին՝ գործարար միջոցներով կանխատեսելու ժամանակի բարդ խնդիրների լուծումը:

Մենք ջերմորեն պաշտպանում ենք մեր երկրի խաղաղ նախաձեռնությունները և հավատում ենք, որ նրանք կյանքում իրագործելը ընդունակ է ժողովուրդներին դուրս բերելու միջուկային պատերազմի վտանգից և առաջնորդելու միջազգային դրությանը:

Մենք կոչ ենք անում աշխարհի բոլոր կրոնների ղեկավարներին և հետևորդներին, ուժեղացնելու պայքարը զինաթափման և պատերազմի լարվածության թուլացման համար: Եվ այս պայքարում յուրաքանչյուր հավատացյալ պետք է ներդնի իր ավանդը:

Մենք կարծում ենք նաև, որ պատերազմի քաղաքականությունը պետք է դիմագրավվի խաղաղության քաղաքականությամբ, քաղաքականություն, որ հենվում է պետությունների միջև փոխադարձ վստահության վրա, որի շահերի պաշտպանության համար էլ անհրաժեշտ է շարունակել սովետա-ամերիկյան երկխոսությունը, ըստ որում, նաև՝ բարձրագույն մակարդակի վրա և Եվրոպայում հասնել հրթիռամիջուկային զենքի կրճատման: Դրա կարևորագույն աստիճանը կլինի ՆԱՏՕ-ի կողմից Արևմտյան Եվրոպայում նոր, ամերիկյան միջուկային զենքի տեղադրման որոշման վերանայումն ու փոփոխումը:

Մենք կողմնակից ենք այն համոզմանը, որ համայն աշխարհի ժողովուրդները պարտավոր են իմանալ, թե մարդկության համար ինչպիսի կործանարար հետևանքներ կարող է ունենալ միջուկային պատերազմը: Մարդասիրությունը, որով առաջնորդվում են կրոնների հետևորդները, ըստիպում է մեզ միացնելու մեր ձայնը միջուկային սպառնալիքի վերաբերյալ գիտնականների զգուշացումներին, սպառնալիք, որը կախված է ներկա քաղաքակրթության գլխին: Միջուկային պատերազմը անմտություն է, որին դեմ է ելնում մարդկային խիղճը:

Գործել խաղաղության պայծառ կառույցի շինության օգտին, այն միտումով, որ փոխադարձ անհամաձայնությունների կիրառումը մատնվի մոռացության, որ խաղաղասիրությամբ դաստիարակվելը դառնա մարդկային ներքին էության հիմքը, ահա այն կարևոր խնդիրը, որ այժմ կանգնած է բոլոր Եկեղեցիների և կրոնական համախմբությունների առջև, և որը համապատասխանում է խաղաղության և ճշմարտության համար մղվող մեր միացյալ գործունեությանը, մեզ միացնող մեր կրոնների հոգևոր-բարոյական սկզբունքներին:

Մենք դիմում ենք բարի կամքի տեր բոլոր մարդկանց, կոչ անելով է՛լ ավելի ուժեղացնելու խաղաղության և արդարության հաղթանակի համար տարվող մեր գործունեությունը:

Թո՛ղ աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ հավետ կենդանի մնա արդար և կայուն խաղաղությունը:

Խաղաղության սույն կոչի տակ առաջինը Իր ստորագրությունը դրեց Հայոց Հայրապետը: Կոչը ստորագրեցին նաև Համայն Ռուսիո Տ. Պիմեն և Համայն Վրաստանի Տ. Իլիա Բ Պատրիարքները և ապա հետևյալ հարանվանությանց ներկայացուցիչները՝

1. Համամիութենական Ավետարանական Մկրտչական Եկեղեցի.
2. ՍՍՀՄ Բուդդիստների հոգևոր վարչություն.
3. Միջին Ասիայի և Ղազախստանի մահմեդական հոգևոր վարչություն.
4 Անդրկովկասի մահմեդականների հոգևոր վարչություն.
5. Հյուսիսային Կովկասի մահմեդականների հոգևոր վարչություն.
6. ՍՍՀՄ Եվրոպական մասի և Սիբիրի մահմեդականների հոգևոր վարչություն.
7. Էստոնական ՍՍՀ Ավետարանական—Լութերական Եկեղեցի.
8. Լիտվական ՍՍՀ Ավետարանական — Լութերական Եկեղեցի.
9. Հրեական կրոնական համայնք.
10. Էստոնիայի Մեթոդիստական Եկեղեցի.
11. Անդրկարպատների Բարեփոխական (ռեֆորմատոր) Եկեղեցի.
12. Լատվիական ՍՍՀ Հռոմեա-կաթոլիկ Եկեղեցի.
13. Լիտվական ՍՍՀ Հռոմեա-կաթոլիկ Եկեղեցի.
14. Մոսկվայի և Համայն Ռուսիո Հնաբնակների արքեպիսկոպոսարան.
15. Մոսկովյան Նովոզիբկովոյի և Հա-

մայն Ռուսիո Հնաձեւ հնագույն-Պրավոսլավ արքեպիսկոպոսարան.

16. Լիտվական ՍՍՀ գերագույն Հնաձեւյանների խորհուրդ.

17. Ռիգայի Հնաձեւյան համայնք.

18. Մոսկվայի Հնաձեւյան համայնք.

19. Յոթերորդ օրվա ադվենտիստների կրոնական ընկերություն:

Համագումարի բոլոր մասնակիցները միահամուռ ծափահարություններով իրենց գոհունակությունն են հայտնում աշխարհի բոլոր կրոնների ղեկավարներին և հետեվորդներին ուղղված սույն կոչի բովանդակության վերաբերյալ:

Կեսօրվա ժամը երեքին Մայրավանքի պատրիարքարանում, ի պատիվ ժողովի մասնակիցների, Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի կողմից տրվում է ճաշկերույթ, որին ներկա են լինում նաև մայրավանքի միաբանության անդամները:

Հանուն բոլոր ժողովականների, եզրափակիչ խոսքով հանդես եկավ Հայոց Հայրապետը, նախ՝ շնորհավորելով Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին նրա գահակալության տասնամյակի առիթով և ապա, մեկ անգամ ևս հաստատելով, որ Հայ Եկեղեցին խաղաղության գործը համարում է սրբազան գործ և անցյալի իր դառը փորձառություններից ելնելով պատրաստ է տևապես պայքարելու հանուն նրա վերջնական հաղթանակի՝ հերջանկություն բոլոր ժողովուրդների: Հավարտ ճաշկերույթի, Հայոց Հայրապետը հրաժեշտ առնելով Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքից, լավագույն տպավորություններով վերադառնում է Մոսկվա և ապա, հունիսի 2-ի առավոտյան՝ Երևան:

Հայոց Հայրապետի այցը Պրավոսլավ Եկեղեցու կենտրոն՝ Զագորսկի Երրորդություն—Սերգիևսկի մայրավանք և նրա գործոն մասնակցությունը խաղաղության սույն ժողովին, լավագույն վկայությունը հանդիսացավ հայ խաղաղասեր ժողովրդի և առավելապես, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մարդասիրական ազնիվ զգացումների և ձգտումների, Հայոց Հայրապետի խոսքերով ասած, «իր ճակատագիրը... կապելով առաջադիմության և խաղաղության պաշտպանների հետ»:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ